

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

քիֆլիսի առեւտրական գազեր:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղթի մասին տարազգի կարգերի է խմբագրողի մօտ:
Գաղթի մասին հրատարակելու կրնա՞նք մասնաւոր յայտարարութիւններ: Գնե՞րի մասին կարելի է խմբագրողի մօտ:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 մասնայ գինը Մարտից մինչև Յունիս քաղաքում 2 ման, 50 կոպ., դուրսը ման է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութեան կարգադրութիւնները, պարգեւներ ասացող աստիճանաւորները, տորթերը: Էս տարւոյ փետրվարի 14-ի տէրութեան 100 միլիօն մ. լաւարկալով նոր փոխառութիւնը: Մեր կաթողիկոսի նորելու համար արած կարգադրութիւնը: Մէկ լիւր խօսք է դ պատճառով: Մէկ քանի խօսք մեր օվկանիս ապրեշումի տուտորի մասին: Առեւտրական տեղեկութիւններ, մաղանդէք:

ՅԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՊԱՐԳԵՆՆԵՐ:

ԹԱԳԱՌՈՐ ԿԱՅՍՐԸ ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ լուկասի փոխարքայի ներկայացնելով, շնորհել է էս տարի Յունիսի 12-ին հետեւեալ աստիճանաւորներին պարգեւներ:

Կաթողիկոսի փոխարքայի մօտ գտնուող VI կարգի ասորիս պարուէնի չինովնիկ, սատասկի Սվետանիկ Կնիազ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻՆ—2-դ աստիճանի Աննա:

Թիֆլիսի Գուբերնիի Պրաւենիի Սաւետանիկ, Կալլիժսկի Սաւետանիկ ԱՄԻՐԵԱՆՅԻՆ—1-և 2-րդ աստիճանի պարգեւ:

Երևանի Գուբերնիի Սուղի Պրեզսեդատե պաշտօնը կատարող, Նաղվորնի Սաւետանիկ ՄԵԼԻԻՔ ԱՂԱՄԱԼԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

Թիֆլիսի Գուբերնիի Պրաւենիի Սաւետանիկ, Նաղվորնի Սաւետանիկ ՀԱՔԻՄԵԱՆՅԻՆ—Թատուկարդարած 2-դ աստիճանի Ստանիսլաւ:

Կաթողիկոսի փոխարքայի մօտ գտնուող VII արդի ասորիս պարուէնի չինովնիկ, Նաղվորնի Սաւետանիկ ՄԵԼԻԻՔ ԲԵԳԱՐԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

Յինանուովի դեպարտամենտումը Նաչալնիկ Լոդեխնիկ պաշտօնը կատարող, Նաղվորնի Սաւետանիկ ՇԱՄԱՐԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

Թիֆլիսի Գրաժդանի Գուբերնատորի մօտ գտնուող ասորիս պարուէնի չինովնիկ, Կալլիժսկի Աստեոր ՄԵԼԻԻՔ ԲԵԳԱՐԵԱՆՅԻՆ—2-աստիճանի Ստանիսլաւ:

Վրեմենայ Աստիճանի Բեղալտորի օգնական, Նաղվորնի Սաւետանիկ ՏԷՐ-ՄԿՐՏԵԱՆՅԻՆ 3-դ աստիճանի Աննա:

Ջակաւկազսկի Դեղիչի Ինտիտուտի հայոց Կրօնի և Լեղուի վարժապետ—Աւագ Գանանայ ՕՐԲԵԼՈՒՆ—մի և նոյն պարգեւ:

Սոնալի Ուեղիչի բժիշկ, Կալլիժսկի Աստեոր ՍԱՀԱԿԵԱՆՅԻՆ—3-դ աստիճանի Ստանիսլաւ:

Նիստաւետալի Ուեղիչի Ուպրաւլենի Սեկրետար, Տիտուկարնի Սաւետանիկ ԱՎԵՄԻՐԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

Երևանի Գուբերնիի Սուղի Սեկրետարի օգնական, Տիտուկարնի Սաւետանիկ ԽՈՋԱՆԻԹԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

Թիֆլիսի Րէալնի Գլխաւորի վարժապետ, Տիտուկարնի Սաւետանիկ ՊԱՊԱՋԱՆԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

Ախալցխայի Գարադմոյ Պրեզիդի Երեւոտովնի Պրիտուալ, Պատարուէնի ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆՅԻՆ—մի և նոյն պարգեւ:

ՏՈՐԳԵՐ:

Գատուարտամենտին իմուշեալ Դեպարտամենտումը Նաչաւակած է էս մարտի 20-ին Թէլաւի ուեղի Օժիօ և Խորխեւի անունով դեղերի մէջը գտնուած երկու եկեղեցական բաղի իջարով տալու տորգը:

Միկնոյն տեղը Նաչաւակած է էս Մարտի 19-ին Թիֆլիսի Սիօնի քուչումը գտնուած եկեղեցական մէկ դուքանի իջարով տալու տորգը:

Էլի Էնտեղ Նաչաւակած է Մարտի 19-ին Թիֆլիսի, Դուչիթի և Գորու Ուսերի լատակ մօտ:

մի իջարով տալու տորգը:

Դերբենդի Օբլաստնոյ Սուղումը Նաչաւակած է էս Մարտի 18-ին Թիֆլիսի քաղաքացի Զաքար Տէր Խաչատուրովի 4100 մ. դին դրած բաղնու գեւինը ծախելու համար տորգ:

Երևանի Գուբերնիի Պրաւլենիումը Նաչաւակած է էս տարի Մայիսի 10-ին Թիֆլիսի քաղաքացի Մուշէ Միլիանովի 1672 մ. դին դրած Երևանի 13 դուքանի ծախելու տորգը:

Թելաւ—Սիդնախսկի Ուեղիչի Սուղումը էս տարի ապրիլի 16-ին Նաչաւակած է Գաւազա և Սանովարդո գեղերի մօտ Աւագան գետի ձկան իջարով տալու տորգը:

Կաւկազսկի Վաննի Օկրուդի Ակրուժնոյ Արտիլլերիսկի Պրաւլենիումը Նաչաւակած է էս մարտի 17-ին զանազան մատերեալների և ինտարումենտների հասցնելու համար տորգ:

Տերսկի Օբլաստնոյ Սուղումը, որ գտնուում է Վրադիկաւկազ, Նաչաւակած է էս տարի Յունիսի 3-ին Պաղաւկովնիկի կնիկ Ալէքսանդրա Տվերիտոնովի 11000 մ. դին արած տան ծախելու տորգը:

Թիֆլիսի Վաննի գոշալտումը մարտի 19-ին Նաչաւակած է գոշալտալի փետեղենների, երկաթեղենների և չուգունեղենների ներկելու տորգը:

Կալլիժսկի Վաննի Օկրուդի Վոլեննո Մեդիցինսկի Ուպրաւլենիումը Նաչաւակած է ապրիլի 4-ին Թիֆլիսի Զապանի ախտկի մատերեալների, պրիպանների և կաւէ ամանների հասցնելու տորգը:

Ակրուժնոյ Ինտենդատի Ուպրաւլենիումը Ապրիլի 14-ին Նաչաւակած է Սոխումի մագաղիկց զանազան տեղեր պրաւլիտուի հասցնելու տորգը:

Այրուժնոյ ինձիններն Ուրապոլէնիումը էս Մարտի 15-ին նշանակած է Արաթումանի և Ուրապոլէի տաք ջրերի համար զանազան շինութիւններ անելու փողոսովը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Զակաւկազդիկ Պրիկապուժը Ապրիլի 6 ին կծախովին իր ժամանակին չլծախած արծաթեղեններ, ոսկեղեններ և ուրիշ թանկագին բաներ:

Զակաւկազդիկ Սիլադոնի Գամոմնուժը Մարտի 17-ից սկսած՝ կծախով կանֆիսկայի տակն ընկած 2 փութ և 34 գրովանքա ամբիկա և 7 փութ և 30 գրովանքա չիթ:

Կաւկասի ձիաների սկաչի (դողի) զլստուր կամիտեղ յայտնում է, որ ամբիկի սկզբումը թիֆլիսումը պէտք է լինի գողը:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մարտի 12 — 1866:

Էս տարվայ Փետրվարի 14-ին մեր տէրութիւնը յայտնեց նորից 100 միլիօն մանէթի փոխառութիւնը, այսինքն թէ տէրութիւնը իր հարստակները փոխ առաւ 100 միլիօն մանէթ 60 տարի ժամանակով:

Առաջին անգամ Բուսապ տէրութիւնը իր ժողովուրդից փոխ առաւ էլն էդքան և էդքան ժամանակով 1864 թվին վերջին:

Յայտնի է, որ ամեն տէրութեան կեանքի մէջը լինում էն էնպիսի ժամանակներ, որ հարկաւոր է լինում երկաթէ ճանապարհներ շինել, կամ սրտ նման մեծ գործեր, որոնք որ առանց մեծ մեծ ծախսերի չեն կարող զուլս գալ: Էս պատճառով տէրութիւնը սպիւպած է շահով պարտք վեր առնել ուրիշից:

Քանի որ Եւրոպայումը դեռ լաւ չուէին հասկացած ժողովուրդի շահն ու գուտը և քաղաքական տնտեսութիւն ասած գիտութիւնը, Եւրոպայի տէրութիւնները փողի հարկաւորութիւն ունեցած ժամանակը միշտ պարտք էին վեր առնում երեւելի դաւաժներով, պարտաւորվում էին ծարել նրանց ահազին շահով:

Բայց վերջին ժամանակներումը տէրութիւնները հասկացան, որ էդ կերպով պարտքեր վեր առնելը իրանց ձեռք չի տալ—էդուր համար էլ աւելի լաւ համարեցին պարտք վեր առնել իրանց հը-

պատակներով, քան թէ մասնաւոր մարդքերանցից: Էդ ձևով առած պարտքը ասվում է ներքին պարտք, կամ ներքին փոխառութիւն:

Մեր տէրութիւնն էլ 1864 թվին հարկաւոր համարեց իր հարստակները ներքին պարտք վեր առնելու:

Հիմի էլ Փետրվարի 14 ին նոր էլ վեր է առել 100 միլիօն մանէթ պարտք ինչպէս Մոսկովից մինչև Սև ծովը երկաթէ ճանապարհը շինելու, նմանապէս և ուրիշ հարկաւոր գործերի համար:

Ինչպէս առաջին ներքին պարտքը նմանապէս և էս նոր պարտքը բաժանվում է մէկ միլիօն տոմսակ (բիլէթ), ամեն մէկը 100 մանէթանոց: Մէկ միլիօն տոմսակները բաժանվում են 20,000 Մերի, ամեն մէկ սերին ունէ 50 նուսն: Պարտքը վեր է առնվում 60 տարի ժամանակով: Էդ 60 տարվայ մէջը տարեկան երկու անգամ նշանակած ժամանակներին, այս ինքըն Մարտի 1-ին և Սեպտեմբերի 1-ին բանկը դուրս է տալիս մէկ քանի հազար նուսներ և էդ նուսների տիրոջը 100 մանէթի տեղ յետ է տալիս 120—150մ. Ուրեմն եթէ առաջին տարին ձեր նուսնըը դուրս եկաւ, դուք ստանումեք 100 մանէթի տեղ 120 մ: Էդպէս ամեն տարի պարտքը վճարելով տէրութիւնը յետ կդարձնէ բոլորովին 60 տարվայ մէջը: Բացի էդուրից ձեր 100 մանէթը տալին 5 շահ է բերում: Էդ պարտքի հետ սարգած է և լատարեյա, որը որ խաղվում է առաջին 30 տարին տարեկան երկու անգամ, վերջին 30 տարին տարեկան մէկ անգամ: Էդ լատարեյումը բաղդ ունեցողը կարող է սանել 500 մանէթից մինչև 200,000 մ: Էդպէս ուրեմն տեսնում ենք, որ էդ փոխառութիւնը օգտաւէտ է թէ տէրութեանի համար և թէ փողատէրների համար:

1864 թվին պարտքի տոմսակների դիւնը Պետերբուրգի բիրժայումը վերջին ժամանակները հասաւ 118-ին և մօտ 120 մանէթին: Ի հարկէ շատերը միայն էդ տոմսակների առուստուր սարգեցին, առ-

նում էին և ծախում: Յանկարծ էս նոր պարտքի համարը տարածվեցաւ Թէ չէ, հնի դները ցած ընկան մինչև 107 մ. և էլն առնող չէր գտնվում:

Էս տարվայ պարտքի կանոնները միայն էնդուրով են զանազանվում 1864 թվին պարտքից, որ հին պարտքի տոմսակները կարելի էր վեր առնել միայն շատ կարճ ժամանակ, բայց էս նոր պարտքի տոմսակները ծախվում կլինին բանկումը միշտ:

Սեւ համար էլ շատ ուրախանալու բան է՝ որ մեր տէրութիւնը նոր միջոցներ է ստանում աւելի շուտով զուլս բերելու իր բարի դիտաւորութիւնները, որոնք պէտք է մեծ ներգործութիւն ունենան մեր երկրի և մեր առուստուրի ծաղկելու վայրայ: Մենք արդեն տեսնում ենք մեր աչքի առաջ շինվող երկաթէ ճանապարհը Փոթից մինչև Թիֆլիս: Հասկանում ենք թէ դա ինչքան մեծ նշանակութիւն պէտք է ունենայ մեր կեանքի համար և անհամբերութեամբ սպասում ենք, թէ երբ պէտք է երկաթէ ճանապարհի մուխը դիպչի և մեր սարերին ու մեզ էլ գողորշու շնորհքով թռչունի պէս թռչնում լինի Թիֆլիսից դէպի Սև ծով: . . . Ա. Ե.

ՄԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐԵՒՈՒ ՀԱՄԱՐ ԱՐԱՄ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ:

Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԿՈՒԼիտի փոխարքան մեր երկրի հայերին աւելի միջոց տալու կանոնաւոր կրպով կաթողիկոս ընտրելու համար աշխարհական պատգամաւորներ (Գեպուտատներ) ջոկելու, կարգադրեց

1.) Երբոր Էջմիածնի Սինոդից Կովկասի հայ վիճակաւոր Առաջնորդները ստանան պատգամաւոր ընտրելու հրամանը, պէտք է զրանք լիապէս տան տեղի Գուբերնատորին էն վիճակիցը մէկ աշխարհական պատգամաւոր ընտրելու համար կարգադրութիւն անելու:

2.) Վիճակաւոր Առաջնորդը Հայոց եկեղեցւոյ հոգեւոր գործերի կառավարութեան կարգադրութեան 962, 963, 964 և 965 յօդուածների հատոր XI, մասն 1 գլուխ 4.) դրութենով, որ տեղ նշանակած է վիճակի բաժանումը, պէտք է ցոյց տայ Գուբերնիին Նաչախիկին էն ունեղներն ու ուշատիկները, ինչպէս կան հայ կանոնադրութեւք և բլաղոյնիէք և ինչպէս հայերը, որոնք որ ունեն հա-

յոց եկեղեցւոյ վարդապետ տնօրէնութենով իրաւունք աշխարհական պատգամաւորի ընտրութենումը մասնակից լինել: պէտք է ընտրեն իրանց միջից երեսփոխներ:

3.) Էս տեղեկութիւնները ստանալուց յետոյ Գուբերնատորը Ուեղդնի Նաչաւնիկներին ձեռով կարգադրութիւն պէտք է անէ, որ հոգևոր կառավարութիւնն և վիճակալին իշխանութենից կախում ընդունին իրանց տնօրէնութեան ընտրութեան 2, 2 երեսփոխ ընտրելի, որոնք որ նշանակած ժամանակներուն պէտք է գտնուին վիճակի գլխաւոր քաղաքում և նրանք էն քաղաքի երեսփոխների հետ պէտք է ընտրեն մէկ պատգամաւոր որը վիճակի համար:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ: Թէպէտ Գուբայլի բլաղդինեան ուղղակի չէ ստորադրուած վրաստանի վիճակաւոր իշխանութենին, բայց որովհետեւ իմերեթու և Գուրիա հայոց եկեղեցիքը էս վիճակի մէկ մասն են կազմում, էսպիսի համար էնտեղի բնակիչներին էլ 2 երեսփոխ պէտք է ընտրել:

4.) Երեսփոխ կարող են ընտրուիլ նրանք, որոնք որ իրաւունք ունին ընտրութենումը մասնակից լինելու: Եթէ ընտրած երեսփոխը չկարողանայ գնալ վիճակի գլխաւոր քաղաքը, պէտք է իր իրաւունքը ուրիշ իշխանին:

5.) Վիճակի գլխաւոր քաղաքի երեսփոխներն ընտրելու համար վիճակաւոր Առաջնորդը տեղի Գուբերնատորի համաձայնութենով պէտք է հրամայէ բոլոր եկեղեցիքու Առաջ-քահանաներին, որ առաջի կիրակիօրը հրաւիրեն նրանց, որոնք որ Հայոց եկեղեցւոյ վարդապետ ձեռով իրաւունք ունին պատգամաւոր ընտրելու—իրանց միջից երեսփոխներ ընտրելու: Եղ երեսփոխները յետոյ կընտրեն մէկ պատգամաւոր, որմոր պէտք է մասնակից լինի կաթողիկոս ընտրելիս:

Էս երեսփոխների ընտրութիւնը էս կարգով կ'ընեն:

Ա.) Ամեն եկեղեցու ժողովուրդը պէտք է ընտրէ 3 երեսփոխ:

Բ.) Երեսփոխների ընտրութիւնը պէտք է լինի կամ եկեղեցւում և կամ եկեղեցու պարսպում: Պէտք է էս ընտրութիւնը վերջանայ 8 օրումը: Ժողովրդին խնայում տալու օրից հաշվելով:

Գ.) Երբոր ընտրվին երեսփոխները, պէտք է թղթի վրայ ձեռք քաշեն նրանք իրանց անունն ու աղղը-յետոյ ձեռք կ'քաշեն էն թղթի վրայ և ընտրողները:

Դ.) Ընտրութիւնը վերջանալուց յետոյ Առաջ քահանան կ'ներկայացնէ ստորադրած թերթը վիճակաւոր Առաջնորդին, սա էլ

կտարիէ Գուբերնատորին կամ որ տեղ Գուբերնատոր չլինի՝ Ուեղդնի Նաչաւնիկներին:

6.) Գուբերնատորի և կամ Ուեղդնի Նաչաւնիկի համաձայնութենով կ'նշանակվի վիճակի գլխաւոր քաղաքումը բոլոր երեսփոխների ժողովելու ժամանակը և տեղը:

7.) Նշանակած ժամանակը բոլոր երեսփոխները պէտք է ժողովվին նշանակած տեղը վիճակի համար մէկ պատգամաւոր ընտրելու: Թէ երեսփոխների երեք մասինց երկուսը ներկայ գտնվի ժողովումը կարելի է ընտրութիւն անել:

8.) Երեսփոխները ընտրվողներու համաձայնութենով ընտրում են պատգամաւորին քուէով (կ'ենձով):

9.) Շատ քուէ ունեցող կ'նշանակվի էն վիճակի պատգամաւոր, նրանից քիչ քուէ ունեցողը կ'նշանակվի նրա փոխանորդ (կանդիդատ):

10.) Երեսփոխների ժողովումը պատգամաւոր ընտրելիս պէտք է գտնվի կառավարութենից նշանակած մէկ աստիճանաւոր կարգը պահպանելու համար:

11.) Ամեն վիճակներիցն ընտրած աշխարհական պատգամաւորները պէտք է նշանակած ժամանակը գնան Էջմիածին՝ Կաթողիկոս ընտրելուն մասնակից լինելու:

12.) Էս պատգամաւորները թէ որ չկարողանան գնալ Էջմիածին, կարող են իրանց կարծիքը յայտնել Էջմիածին դրով:

Էս կարգադրութիւնների կատարվիլը ի հարկէ չուտով կսկսվի, որովհետեւ Օգոստոսի վերջին պէտք է արդեն ընտրած լինի մեր Կաթողիկոսը: Կոնստանդնուք ուրեմն չուտով նոր Կաթողիկոս, մեր եկեղեցին կ'ձարէ իր զուլբը:

Ի՞նչ ենք սպասում մեր նոր Կաթողիկոսից: Մենք կարծում ենք աւելորդ չէր լինի ասել էս գլխից մէկ երկու խօսք էս մասին:

Ի՞նչ ենք տեսել մեր վերջին երկու Կաթողիկոսների մէջը: Մեր վերջին Կաթողիկոսներն էին Ներսէսը և Մատթէոսը: Առաջինը հասկանալով, որ ոչինչ բան անկարելի է առանց ուսումի և ցիտութիւնների, քանի կենդանի էր աշխատում էր մեր ուսումնարանների սրբառացներու վրայ: Սրա գլխաւոր պտուղն էթիֆ լիթի Ներսիսեան ուսումնարանը: Թիֆլիսի 67 ծխական մանր ուսումնարանները: Սա ուր է միայն կուղէր, որ բացվին ուսումնարանները, այլ և կամենում էր, որ բաց արած ուսումնարանները կանոնաւոր լինին, սրտուղ բերեն: Իր առողջութենից աւելի հոգում էր նա մեր ուսումնարանների պայծառացներու վրայ: Աղգիւմ, աչք իմ՝ կարող էր պարծնաւոր տանլ Ներսէսը, բայց նա էնքան խոհմ էր, որ լաւ

հասկանում էր, թէ ինքը միայն գործ պիտի կատարէ քանի կենդանի է, յետոյ նրա գործը տեսնողները զին կ'ընեն նրա բոլոր արարմունքները:

Մեր վերջին Կաթողիկոս Մատթէոսը նը մանապէս ցանկանում էր տարածել հայերի մէջն ուսում: Բայց պէտք է ասել, որ սա իր հաստատած ուսումնարանների համար համարիա թէ չէր հոգում: Հաստատում էր ուսումնարանները, որոնց համար ստանում էր զանազան տեղերի հայերից առաջարկութիւններ: Հաստատում էր միայն, և ուրիշ ոչինչ: Սա իր կեանքումը 12 թէ 13 հայերէն եկեղեցական դրքեր է շարադրել և կարծում էր էդուրով աւելի օգուտ բերել հայերին:

Բայց ենք ասում հիմի մեր նոր Կաթողիկոսացու առաջ մէկ քանի բան, որոնց համար պէտք է աշխատէ նա, եթէ կամենում է, որ իր Կաթողիկոսութիւնը էնպէս անսոսանալի դառնայ, ինչպէս Ներսէսի Կաթողիկոսութիւնը:

Էջմիածինը, որ Նրա աթոռը պէտք է լինի, անում են, բաւական բաներ ունէ ուշք դարձնելու: Ենտեղի և նմանապէս մեր միւս վանքերի վարդապետներին շատ դործունէութիւն է հարկաւոր: Պէտք է էնպէս անել, որ թէ շատ չէ կարելի, քիչատուղ դոնեան բերելուս նրանց:

Ասում են, թէ մեր Կոթիկոսի կողմերումը շատ տեղ հայերը փոխում են իրանց հաւատը Կաթողիկոսների և Պրոտեստանտների վարդապետների քարոզութիւններով: Պէտք է ուշք դարձնել էդ հայերի վրայ, պէտք է էդ գործ յարմար վարդապետներ ուղարկել էն տեղերը հայերին իրանց հաւատին հաստատ պահելու:

Ուսումնարանները, որ ամեն աղղի լուսասաւորողներ են, պէտք է սիրելի լինին Նրան ամեն բանից աւելի: Ամեն տեղ, ուր որ միայն հայերը աշխատում են հոգևոր ուսումնարանների համար, պէտք է էդ գործի յարմար վարդապետներ ուղարկէ Նա ժողովրդի ցանկութիւնը գլուխ բերելու և նրանցն աւելի հոգի տալու, որ ուսումնարանները բազմանան, պայծառանան և հաստատ մնան:

Նա պէտք է սիրէ հայերի բարոյական յառաջադիմութիւնը իրա գլխիցն առաւել, ոչ թէ միայն խօսքով—այլ անպատճառ գործով: Պէտք է ցանկանայ հայերի լաւին, ապրի միայն ուրիշների համար—այո՛ւնքն հայերի համար: Վերջը կտեսնէ, որ իրա համար աւելի է ապրել, քան թէ ուրիշների համար:

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ՄԵՐ ԿՈՎԱՍՄԻ ԱՊՐԵՇՈՒՄԻ ԱՐՈՒՏՈՒՐԻ ՄԱՍԻՆ:

Ահա բաւական ժամանակ է, որ Երոտպալումը ապրիշումի ճիճով ցաւ կայ, բայց մեր Կովկասի կողմերումը ճիճուն առողջ է, Գաղ-

դիպացիքը և խտալացիքը ղեկեցին մեր կողմը և մօտ հինգ տարի է միշտ մեր երկրից են տանում անպրեհուսի ճիճուի սերմը: Մէկ կերպ է դ բանը շատ ուրախալի է, որովհետև նրանց փողերը քաշվում են մեր կողմերը:

Սկզբումը Եւրոպացիքը դուրս էին տանում տարին մօտ 700 փութ սերմը, բայց 1863 թվին դուրս տարան մօտ 3,000 փութ: Էդ բանը իհարկէ մնաս ավելի է անպրեհուս քաշողներին, որոնք կարծում էին թէ Եւրոպացիքը իրանց կղկմէ ու քաշած անպրեհումը կանեն:

Յայտնի բան է, որ էդ օտարազգի վաճառականները պէտք է ջոկեն միշտ լաւ տեսակները թէ սերմերը և թէ կօկօնները: 1863 թվին դուրս տարած 3,000 փութ ճիճուի սերմը ջոկելու համար հարկաւոր էր 60,000 փութ կենդանի ու դեռ չստանալով կօկօն էդպէս շատ կօկօնի առնելու պատճառը էն է, որ դրանց կէսը արդէն ճանապարհին է միշտ ձու ածում և փչանում է: Եւ էդպէսով լաւ տեսակ ճիճուի կօկօնները հետնուհետը սկսեցին փչանալ: 1862 թվին առհասարակ մէկ մսխալ անպրեհումը դուրս էր գալիս մօտ 4 մսխալ չոր կօկօնից, 1863 թվին նմանապէս մէկ մսխալ անպրեհումը ստացվում էր միմիայն 6 ու կէս մսխալից: Ուրեմն 1863 թվին կօկօնները 1862 թվի հետ համեմատելով 1 ու կրկն քաշակը պակաս անպրեհում առին:

Էդ բոլորի պատճառն էն էր, որ մեր երկրացիքը չեն ղեկեցին սերմի պահելը և ապա դայի համար էլ հողալը: Էսօր նրանցը ղեկիս սերմին լաւ ղին տալին թէ չէ, իսկոյն նրանք պատրաստ են ծախելու, չմտածելով որ յետոյ իրանք սերմը չեն առնենալ: 1861 թվին Նուխլայ մէջ չոր կօկօնները ծախվում էին 25-28 մանէթ, 1863 թվին 30-35 ման, 1864 թվին 60-70 մանէթ և գների թանկանալու հետք սկսում է ճիճուի լաւ տեսակներն էլ վեր ընկնիլ ու հատնել: Միւս կողմից սերմի դուրս տանելը ներդրութուն ունեցաւ անպրեհումի գների վրայ էլ, երբ որ սերմը սկսվեց լաւ ղնով ծախվիլ ու քչանալ, քչացաւ և քաշած անպրեհումը ու մեր երկրացուց անարհեստ քաշած անպրեհումն էլ շատ մեծ ղին բռնեց: Նուխլայ թեւը օրինակ չորս հինգ տարի առաջ Մոսկով ծախվում էր 115-140 մ. ժամանակով, բայց հիմի մօտ 300 մ. նաղդի: Առաջ Նուխլայ Մոսկով գնում էր մօտ 2000 հալը թեւը հիմի կէսն էլ չէ գնում և բացի էդ էլ չկան հիմի էն գեղեցիկ աղնիւ տեսակները, որ առաջ շատ կար: Ահա լաւ անպաշտպան, թէ օտար ազգերի մեր երկրից սերմի դուրս տանելը ինչքան մնաստակ է մեր երկրի անպրեհումին:

Ա. Ե.

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն. 1866 Փետրվարի 14/ն:

Բումբայից գրում են Փետրվարի 7-ին, որ Հնդկաստանում էս տարի հերուանից 400,000 հալը պակաս է դուրս եկել բամբակը: Ժամանակով կերելի, թէ ի՞նչ հետեանքներ կունենայ էս բանը բամբակի առուտուրի վրայ:

Սիւրբուրգ. Փետրվարի 14.

Էսօր 15000 հալը բամբակ ծախվեցաւ: Ամերիկայի բամբակը աւելի թանկ է ծախվում: Սպասում են բամբակի գրներին բարձրանալուն:

Մանչեստեր. Փետրվարի 14.

Բամբակեղենի ֆաբրիկաները շատ լաւ գրութենի մէջն են: Էնպէս լաւ է առաջ գնում բանը, որ էս վերջին երկու երեք տարվայ մէջը նմանը չէ ելել:

Պետերբուրգ. Փետրվարի 18.

ՎԵՔՍԻԼԻ ԿՈՒՐՍԸ:

Լոնդոնի վրայ 3 ամիս ժամանակով — 30 $\frac{5}{16}$ պենս:

Պարիսի վրայ 3 ամիս — 317 $\frac{1}{2}$ — 318 $\frac{1}{2}$ սանտիմ:

Առաջին լատարեյով 5% ներքին պարտքի տոմսակը — 107 մ:

Երկրորդ լատարեյով 5% ներքին պարտքի տոմսակները ծախվում է բանկումը 105 մ:

Ռսկին 6 մ. 42 կ. — 6 մ. 45 կ.

Մոսկով. Փետրվարի 13.

Ռսի շաքարի լաւ տեսակը — 9 մ. 50 կ. — 10 մ:

Պարսից ֆաշանու անպրեհումը — 265 մ. — 275 մ:

Նուխլայ լաւ տեսակը — 300 մ:

— 310 մ:

Երեւանու բամբակը . . . — 18 մ. 25 կ.

— 18 մ. 50 կ

Կոնդուրասի ղըմըր . . . — 55 մ:

— 57 մ:

Բենդալիայի լաւ լեղակը — 133 մ:

Եալայինը . . . — 120 մ:

— 130 մ:

Կ. Պօլիս. Փետրվարի 26:

Բամբակի և բրդի գները մի և նոյնն են ինչ որ անցեալ շաբաթ Միայն Բիրժայ յումը բամբակը ծանր է ծախվում: Հարցնողը քիչ է:

Խիֆլիս. Մարտի 11—1866:

Երեւանու բամբակը . . . — 12 մ. 50 կ. Երկու օր առաջ էդ գնով ծախվեցաւ մօտ 400 հալը:

Բուրդը . . . — Եալայի լեղակը . . . — 160 — 165 մ:

5 կամ 6 ամիս ժամանակով:

Ինդիգո շաքարը . . . 10 մ:

Ռսկին . . . 10 մ 20 կ:

Արծաթը 72 պրոբի — 66 մ:

84 . . . 240 մ:

Ռսկին . . . 6 մ. — 63 կ:

ՄԱՍՆԱԽՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Էս Մարտի 20-ին կ'դուրս գայ երեխաների համար նոր դասագիրքը «Ընթերցարան» անունով, որնոր շինած է Ռուսաց Պատվածի գրքի համեմատ, հայերին յարմարացրած: Սրա աշխատասիրողներն են Պ. Տ. Ա. և Ա. Ե: Պինը հատով առնողի համար 40 կ. իսկ գումարով առնողի համար 35 կ:

Գլխազիւղայումը կուրսը աւարտած մէկ հայ տղայ առաջարկում է ծնողներին, որ նա կամենում է դաս տալ երեխաներին գլխազիւղայումը դաս տալով առարկաները: Էդ պարոնի մասին կարելի է հարցնել մեր խրմբագրատանը: